Համաշխարհային տնտեսական համաժողովի
«Համաշխարհային մրցունակության 2015 - 2016 թթ. ինդեքս»[1]

2015թ. սեպտեմբերի 29-ին Համաշխարհային տնտեսական համաժողովը (Համաժողով) հրապարակել է ***«Համաշխարհային մրցունակություն 2015/2016»*** զեկույցը, որում Հայաստանը աշխարհի 140 երկրների շարքում զբաղեցրել է 82-րդ տեղը՝ նախորդ տարվա 85-րդ տեղի համեմատ (աշխարհի 144 երկրների շարքում)[2]: Հայաստանի մրցունակության գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել և կազմել 4.01 միավոր՝ 7.0 լավագույն հնարավորից:

Երկրների մրցունակության մակարդակը գնահատելու նպատակով Համաժողովի փորձագետները դիտարկել են յուրաքանչյուր երկրի տնտեսությունը բնութագրող 114 առանձին ցուցանիշներ, որոնք ամփոփվում են ***տասներկու հիմնասյուների*** մեջ: Դրանք են՝

- **Հաստատություններ**
- **Ենթակառույցներ**
- **Մակրոտնտեսական կայունություն**
- **Առողջապահություն և տարրական կրթություն**
- **Բարձրագույն կրթություն և վերապատրաստումներ**
- **Ապրանքային շուկայի արդյունավետություն**
- **Աշխատուժի շուկայի արդյունավետություն**
- **Ֆինանսական շուկայի զարգացվածություն**
- **Տեխնոլոգիական պատրաստվածություն**
- **Շուկայի չափ**
- **Գործարարության զարգացվածություն**
- **Նորամուծություններ:**

Վերոնշյալ հիմնասյուներում ներառված ցուցանիշների հիմնական մասը ստացվում է Հայաստանի գործարար-ղեկավարների շրջանում 2014-2015թթ.-ին իրականացրած հարցումների (**Executive Opinion Survey)** հիման վրա[3]: Այդ հարցումներին 2014թ.-ին մասնակցել են 76, իսկ 2015թ.-ին՝ 75 գործարարներ:

Համեմատելով Համաժողովի 2015-2016թթ. և 2014-2015թթ. զեկույցներում հրապարակված Հայաստանի մրցունակության 12 հիմնասյուների գնահատականները և դիրքերը, նկատում ենք, որ

---

[1] *Աղբյուրը՝ **«Համաշխարհային մրցունակության 2015-2016 զեկույց»**, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2015թ., 403 էջ:*

[2] *Համաշխարհային տնտեսական համաժողովը երկրների մրցունակության ինդեքսների ժամանակագրական համադրելիությունն ապահովելու նպատակով հրապարակում է նաև այդ երկրների դիրքերը՝ ճշգրտված նախորդ տարում իր կողմից դիտարկված երկրների թվաքանակով: Արդյունքում, Հայաստանը ներկայումս 81-րդ տեղն է զբաղեցնում իր ճշգրտված դիրքով՝ նախորդ տարում (2014թ.) Համաժողովի կողմից դիտարկված 144 երկրների շարքում:*

[3] *Ղեկավարների կարծիքի հարցումներն (Executive Opinion Survey) իրականացվում են աշխարհի տարբեր երկրներում գործարար-ղեկավարների շրջանում և ներառում են այնպիսի թեմաներ, որոնց համար տվյալների աղբյուրները սակավ են կամ, երբեմն, գլոբալ մասշտաբով գոյություն չունեն: Այն օգնում է գնահատել երկրներում հմտությունների բացը, կոռուպցիայի մակարդակը, շուկայական մրցակցության ինտենսիվությունը և այդ հարցումներն ավելի որակյալ արդյունքներ են տալիս, քան կոշտ տվյալները: Այսինքն, այս հարցումները հանդիսանում են անհրաժեշտ լրացում այն տվյալների, որոնք հրապարակվում են միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների կողմից:*

բարելավում է գրանցվել դրանցից 7-ում, իսկ վատացում՝ 5-ում: Մասնավորապես՝ բարելավում է արձանագրվել **մակրոտնտեսական կայունության** (5 տեղով), **առողջապահության և առաջնային կրթության** (4 տեղով), **բարձրագույն կրթության/ վերապատրաստման** (3 տեղով), **ապրանքային շուկայի** և **աշխատուժի շուկայի արդյունավետության** (համապատասխանաբար՝ 14 և 16 տեղով), **ֆինանսական շուկայի զարգացվածության** (3 տեղով) և շուկայի չափի (2 տեղով) ոլորտներում: Մինչդեռ 4-ական տեղով վատացում է արձանագրվել **հաստատությունների**, **ենթակառույցների, տեխնոլոգիական պատրաստվածության, գործարար զարգացվածության** և **նորամուծությունների** ոլորտներում (տե՛ս աղյուսակ 1):

Ուշագրավ է այն փաստը, որ 2015/2016թթ. զեկույցում Հայաստանը այս տարի ևս Հայաստանը դասվել է **արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում գտնվող** երկրների թվին[4]: Այս փուլում Հայաստանի մրցունակության գնահատման ժամանակ առավել մեծ կշիռներ են տրվում բարձրագույն կրթության եւ վերապատրաստման բարելավմանը (հիմնասյուն 5), ապրանքային շուկայի և աշխատուժի շուկայի արդյունավետության բարձրացմանը (հիմնասյուներ 6 և 7), ֆինանսական շուկայի շարունակական զարգացմանը (հիմնասյուն 8), առաջավոր տեխնոլոգիաներից ակտիվորեն օգտվելու ունակությանը (հիմնասյուն 9) և Հայաստանի ներքին կամ արտաքին շուկաների մեծությանը (հիմնասյուն 10): Դա ենթադրում է, որ ներկայումս Հայաստանի տնտեսական զարգացումը պետք է հիմնվի առավել արդյունավետ արտադրական գործընթացների կազմակերպման և առավել բարձրորակ արտադրանքի թողարկման վրա: Նկատենք, որ ներկայումս, բացի Հայաստանից, **արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում** ներառված են Վրաստանը, Ալբանիան, Բուլղարիան, Մակեդոնիան, Մոնտենեգրոն, Սերբիան, Բոսնիա-Հերցեգովինան և Ուկրաինան:

Այժմ ներկայացնենք Հայաստանի դիրքի փոփոխությունները ըստ **«Համաշխարհային մրցունակության 2015-2016թթ. ինդեքս»** զեկույցում դիտարկվող և ՀՀ կենտրոնական բանկի գործունեությանն առնչվող երկու՝ «**մակրոտնտեսական կայունության**» և «**ֆինանսական զարգացվածության**» հիմնասյուների, ինչպես նաև նկարագրենք Հայաստանի դիրքը այդ երկու հենասյուների գծով տարածաշրջանային համապատկերում:

«Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 5 տեղով՝ պայմանավորված 2014թ. միջին տարեկան **գնաճի** համեմատաբար ցածր (3.1%) մակարդակով (էական բարելավում 48 տեղով) և **ՀՆԱ-ում պետբյուջեի պակասուրդի** (2.1%) նվազմամբ (բարելավում 13 տեղով)[5]: Այս ցուցանիշների բարելավման արդյունքում Հայաստանի **«Մակրոտնտեսական կայունություն»** հիմնասյան գնահատականը կարող էր առավել բարձր լինել,

---

[4] *Երկրի ներառումը տնտեսական զարգացման որևէ փուլում կատարվում է ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և երկրի արտահանման ռեսուրսահինտենսիվության: Ընդ որում՝ ռեսուրսների վրա հիմնված փուլում **(առաջին փուլ)** ներառված են այն երկրները, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն չի գերազանցում 2000 ԱՄՆ դոլարը և արտահանման ռեսուրսահինտենսիվությունը բարձր է 90%-ից: Ռեսուրսների վրա հիմնված փուլից դեպի հաջորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլին **անցման շրջանում** այն երկրներն են, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն գտնվում է 2000 - 2999 ԱՄՆ դոլար միջակայքում, իսկ արտահանման ռեսուրսահինտենսիվությունը բարձր է 70%-ից: Արդյունավետության վրա հիմնված փուլում **(երկրորդ փուլ)** ներառված են այն երկրները, որտեղ որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն գտնվում է 3000- 8999 ԱՄՆ դոլար միջակայքում, իսկ արտահանման ռեսուրսահինտենսիվությունը ցածր է 70%-ից:*

[5] *Հայաստանի պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2014թ. կազմել է 2.1%՝ նախորդ տարվա 2.5%-ի համեմատ:*

եթե **սուվերեն վարկանիշի** գնահատականը չվատանար 2.9%-ով (վատացում 3 տեղով)[6], **ՀՆԱ-ում համախառն ազգային խնայողությունների** մակարդակը չնվազեր 2.5%-ով (վատացում 10 տեղով)[7] և **ՀՆԱ-ում պետական պարտքի** մակարդակը չավելանար 2.3%-ով (վատացում 2 տեղով)[8]:

«**Ֆինանսական շուկայի զարգացվածություն**» հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 3 տեղով, ընդ որում այս հիմնասյան գնահատականի հիմքում ընկած 8 ոլորտներից (ցուցանիշներից) 2-ի գծով գրանցվել է Հայաստանի դիրքի հետընթաց: Մասնավորապես, զգալի հետընթաց է արձանագրվել «**բանկերի ամրություն**» (17 տեղով) և «**ֆինանսավորում տեղական արժեթղթերի շուկայի միջոցով**» (8 տեղով) ոլորտներում: Միևնույն ժամանակ, բարելավում է գրանցվել **«ֆինանսական ծառայությունների առկայություն»** (2 տեղով), «**ֆինանսական ծառայությունների մատչելիություն**» (2 տեղով) և **«վենչուրային կապիտալի առկայություն»** (6 տեղով) ոլորտներում: Նախորդ տարվա համեմատ անփոփոխ են մնացել **«վարկերի մատչելիություն» և «արժեթղթերի բորսաների կարգավորումներ»** ոլորտների գնահատականները, ինչպես նաև «**Օրենսդրական իրավունքների ինդեքսը**»: Նկատենք, որ այս բոլոր ոլորտների գնահատականները ձևավորվել են Հայաստանի գործարար-ղեկավարների հարցումների հիման վրա, հետևաբար այդ ոլորտների բարելավում/վատացումը ավելի հստակ պատկերացնելու համար աղյուսակի տեսքով ներկայացնենք Հայաստանի գնահատականների համեմատական նկարագիրը:

Ցուցանիշներ/հարցեր	2015-2016թթ. զեկույց		2014-2015թթ. զեկույց		2013-2014թթ. զեկույցը	
	Գնահա-տական	Դիրք	Գնահա-տական	Դիրք	Գնահա-տական	Դիրք
1. Ֆինանսական ծառայությունների առկայություն **Հարց.** Ձեր երկրում ֆինանսական համակարգը որքանո՞վ է բիզնեսին ապահովում ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների լայն շրջանակով:	4.3	73	4.3↓	75↓	4.6	63
2. Ֆինանսական ծառայությունների մատչելիություն **Հարց.** Ձեր երկրում ֆինանսական ծառայությունները որքանո՞վ են մատչելի (հասանելի) բիզնեսի համար:	4.0	79	4.0↓	81↓	4.4	50
3. Ֆինանսավորում՝ տեղական արժեթղթերի շուկայի միջոցով **Հարց.** Ձեր երկրի ընկերությունների համար որքանո՞վ է հեշտ միջոցներ ներգրավել արժեթղթերի թողարկման միջոցով:	2.6	120	2.5	112↑	2.5	115
4. Վարկերի մատչելիություն **Հարց.** Ձեր երկրում որքա՞նով է հեշտ առանց գրավի ստանալ բանկային վարկ՝ լավ բիզնես պլանի առկայության դեպքում:	2.5	97	2.5↓	97↓	2.6	88
5. Վենչուրային կապիտալի առկայություն **Հարց.** Ձեր երկրում նորարարական, սակայն ռիսկային ծրագրեր ունեցող ձեռներեցները որքա՞ն հեշտությամբ են կարողանում ֆինանսավորել վենչուրային կապիտալը:	2.5	90	2.4	96↓	2.4	93

6 Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետները որպես սուվերեն վարկանիշի գնահատման հիմք վերցնում են «Ինստիտուցիոնալ ներդրող» կազմակերպության (Institutional Investor LLC) փորձագետների կողմից կիսամյա պարբերականությամբ (յուրաքանչյուր տարվա մարտին և սեպտեմբերին) հրապարակվող գնահատականները: «Ինստիտուցիոնալ ներդրող»-ի փորձագետները հարցումների հիման վրա գնահատում են սուվերենի պարտքային դեֆոլտի հավանականությունը 0-100 սանդղակով, որտեղ 100-ը ցույց է տալիս դեֆոլտի ամենացածր հավանականությունը: «Ինստիտուցիոնալ ներդրող»-ը 2014թ. մարտի դրությամբ Հայաստանի սուվերեն վարկանիշը գնահատել էր «38.0» միավոր, իսկ 2015թ. մարտի դրությամբ՝ «35.1» միավոր:

7 Հայաստանի ազգային խնայողություններ/ՀՆԱ ցուցանիշը 2014թ. կազմել է 13.0%՝ նախորդ տարվա 15.5%-ի համեմատ:

8 Հայաստանի պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2014թ. կազմել է 44.2%՝ նախորդ տարվա 41.9%-ի համեմատ:

6. Բանկերի ամրությունը **Հարց.** Ինչպե՞ս կգնահատեք ձեր երկրում գործող բանկերի ամրությունը:	4.6	83	4.9↓	66↓	5.3	53
7. Արժեթղթերի բորսաների կարգավորումներ **Հարց.** Ձեր երկրում որքանո՞վ արդյունավետ է իրականացվում արժեթղթերի բորսաների կարգավորումն ու վերահսկողությունը:	3.6	112	3.3↓	112↓	3.5	110
8. Օրենսդրական իրավունքների ինդեքս Գնահատվում է վարկառուների և վարկատուների իրավական պաշտպանվածության աստիճանը[9]:	5.0	63	6.0	63↑	6.0	65

Ուսումնասիրելով **ֆինանսական շուկայի զարգացվածություն** ոլորտների դինամիկան, նկատում ենք, որ «**ֆինանսավորում տեղական արժեթղթերի շուկայի միջոցով**» հիմնասյան գծով Հայաստանի դիրքի վատացումը ոչ թե պայմանավորված է դրա հիմքում ընկած ոլորտի **գնահատականի** վատացմամբ (ընդհակառակը, Հայաստանի գնահատականը այդ հիմնասյան գծով բարձրացել է 0.1 միավորով), այլ պայմանավորված է Համաժողովի կողմից դիտարկվող մյուս երկրների ավելի արագ առաջընթացով: Նմանապես, թեև «**արժեթղթերի բորսաների կարգավորումներ**» ոլորտի գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է (0.3 միավորով), այնուամենայնիվ Հայաստանի դիրքը այդ հիմնասյան գծով մնացել է անփոփոխ:

Իսկ ինչ վերաբերում է «**Բանկերի ամրությունը**» հենասյան գծով Հայաստանի գնահատականի, հետևաբար նաև դիրքի վատացմանը, ապա պետք է նշել, որ այդ գնահատականը ձևավորվել է Հայաստանի գործարար-ղեկավարների շրջանում 2014-2015թթ.-ին իրականացրած հարցումների հիման վրա:

Հայաստանի տեղը (դիրքը) աշխարհի 140 երկրների թվում՝ ըստ դիտարկված 114 ցուցանիշների, ինչպես նաև դրանց բարելավման կամ վատացման դինամիկան ներկայացված է աղյուսակ 2-ում, որը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի մրցունակության հիմնասյուների գնահատականների բարելավումը կամ վատացումը պայմանավորող գործոնները:

Ինչ վերաբերում է հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, ապա **համաշխարհային մրցունակության ինդեքսով** երկու երկրներն էլ գերազանցում են Հայաստանին: Ադրբեջանը մրցունակության ինդեքսով զբաղեցնում է 40-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով հետընթաց 2 մակարդակով, իսկ Վրաստանը զբաղեցնում է 66-րդ տեղը և նախորդ տարվա համեմատ գրանցել է 3 մակարդակով առաջընթաց (տե՛ս աղյուսակ 4): Հայաստանի հարևան մյուս երկու երկրներ Թուրքիան և Իրանն էլ են գերազանցում եմ Հայաստանին համաշխարհային մրցունակության ինդեքսով: Մասնավորապես, Թուրքիան զբաղեցնում է 51-րդ, իսկ Իրանը՝ 74-րդ տեղը:

Համաշխարհային մրցունակության ինդեքսով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանին զիջում են Ալբանիան (93-րդ տեղ), Սերբիան (94-րդ տեղ) և Բոսնիա-Հերցոգովինան (111-րդ տեղ), իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Մոլդովան (84-րդ տեղը) ու Ղրղզստանը (102-րդ տեղը) (տե՛ս աղյուսակ 5):

[9] Այս ինդեքսը վերցվում է Համաշխարհային Բանկի «**Գործարարության դյուրինություն**» (Doing Business) վերջին զեկույցից:

«Համաշխարհային մրցունակություն 2015/2016» զեկույցում մրցունակ երկրների առաջին տասնյակում են Շվեյցարիան, Սինգապուրը, ԱՄՆ-ը, Գերմանիան, Նիդեռլանդները, Ճապոնիան, Հոնկոնգը, Ֆինլանդիան, Շվեդիան և Միացյալ Թագավորությունը, իսկ վերջին տասնյակում՝ Մյանմարը, Վենեսուելան, Մոզամբիկը, Հայիթին, Մալավին, Բուրունդին, Սիեռա Լեոնեն, Մավրիտանիան, Չադը և Գվինեան:

Հայաստանի համաշխարհային մրցունակության 2015/2016թթ. ինդեքսը և առանձին հիմնասյուների ենթաինդեքսները, դրանց 2009-2015թթ. դինամիկան, Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը, ինչպես նաև հարավկովկասյան և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի ինդեքսների համեմատական բնութագիրը ներկայացված է ստորև բերված 1-6 աղյուսակներում:

Հայաստանի դիրքը ըստ համաշխարհային մրցունակության հիմնասյուների

Աղյուսակ 1

	Ինդեքսի անվանումը	2015-2016թթ.	2014-2015թթ.	2013-2014թթ.	2012-2013թթ.	2011-2012թթ.	2010-2011թթ.	2009-2010թթ.
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**82/140**	**85/144**	**79/148**	**82/144**	**92/142**	**98/139**	**97/133**
1.	Հաստատություններ	76↓	72	65	71	83	97	95
2.	Ենթակառույցներ	82↓	78	80	80	77	90	81
3.	Մակրոտնտեսական կայունություն	72↑	77	64	83	114	99	53
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	95↑	99	85	80	94	93	97
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	72↑	75	77	70	76	91	96
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	50↑	64	58	72	108	113	116
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	58↑	74	50	30	34	47	47
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	94↑	97	76	78	95	110	97
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	75↓	71	72	92	88	108	105
10.	Շուկայի չափը	116↑	118	117	115	115	116	109
11.	Գործարարության զարգացվածությունը	97↓	93	87	92	107	109	112
12.	Նորամուծություններ	107↓	103	105	112	116	108	106

Հայաստանի դիրքը
ըստ համաշխարհային մրցունակության հիմնասյուների և առանձին ցուցանիշների

Աղյուսակ 2

	Ինդեքսի անվանումը	2015-2016 թթ. երկրի դիրքը աշխարհի 140 երկրների շարքում	2014-2015 թթ. երկրի դիրքը աշխարհի 144 երկրների շարքում	2013-2014 թթ. երկրի դիրքը աշխարհի 148 երկրների շարքում	2012-2013 թթ. երկրի դիրքը աշխարհի 144 երկրների շարքում	2011-2012 թթ. երկրի դիրքը աշխարհի 142 երկրների շարքում	2010-2011 թթ. երկրի դիրքը աշխարհի 139 երկրների շարքում	2009-2010 թթ. երկրի դիրքը աշխարհի 133 երկրների շարքում	2008-2009 թթ. երկրի դիրքը աշխարհի 134 երկրների շարքում
1	**Հաստատությունների ինդեքս**	**76**	**72**	**65**	**71**	**83**	**97**	**95**	**96**
1.01	Մասնավոր սեփականության իրավունքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	90	67	54	64	95	98	79	69
1.02	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	93	84	75	80	96	107	107	108
1.03	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը (2014 -2015թթ. կշռված միջինը)	77	80	84	81	91	103	104	110
1.04	Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	79	76	71	71	83	89	92	104
1.05	Անօրինական վճարներ և կաշառակերություն (2014 -2015թթ. կշռված միջինը)	73	76	75	82	97	104	---	---
1.06	Դատական համակարգի անկախությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	106	109	110	110	108	118	122	123
1.07	Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	71	71	68	75	78	78	82	94
1.08	Կառավարության ծախսումների շռայլումը (2013 -2014թթ. կշռված միջինը)	78	76	60	45	48	54	54	77
1.09	Կառավարության կարգավորման բեռը (2014 -2015թթ. կշռված միջինը)	56	43	34	41	52	91	64	71
1.10	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում (2014 -2015թթ. կշռված միջինը)	89	95	74	75	81	104	111	97
1.11	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում (2014 -2015թթ. կշռված միջինը)	115	98	76	79	84	103	98	
1.12	Կառավարության քաղաքականության թափանցիկությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	51	39	24	16	35	53	65	103
1.13	Ահաբեկչության գործարար ծախքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	40	46	38	8	17	32	26	33
1.14	Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	25	22	20	13	25	31	23	32
1.15	Կազմակերպված հանցագործությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	57	57	57	52	61	66	69	67
1.16	Ոստիկանական ծառայության հուսալիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	79	81	76	93	105	112	104	95
1.17	Ընկերությունների բարոյական վարքագիծը (2014 -2015թթ. կշռված միջինը)	96	90	81	91	106	118	115	115
1.18	Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը ((2014 -2015թթ. կշռված միջինը)	78	83	87	77	87	101	92	97

1.19	Կորպորատիվ խորհուրդների ուժը (2014 -2015թթ. կշռված միջինը)	94	104	96	110	115	130	123	123
1.20	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	108	97	100	104	120	131	123	124
1.21	Ներդրողների պաշտպանվածության ինդեքսի ամրությունը, 2014թ. ինդեքս	48	22	25	80	77	77	71	67
2	**Ենթակառույցների ինդեքս**	**82**	**78**	**80**	**80**	**77**	**90**	**81**	**90**
2.01	Ընդհանուր ենթակառույցների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	58	61	67	71	77	76	78	91
2.02	Ճանապարհների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	75	80	82	80	92	87	72	79
2.03	Երկաթուղային ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	71	68	69	63	69	79	82	83
2.04	Նավահանգստային ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	132	134	122	127	132	128	117	115
2.05	Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	86	72	66	69	74	77	74	85
2.06	Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2015 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների մեկ շաբաթվա միջինը)	102	100	106	96	98	100	100	99
2.07	Էլեկտրականության մատակարարման որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	69	62	60	69	71	78	82	89
2.08	Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014թ.	64	70	80	80	33	81	93	123
2.09	Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով), 2014 թ.	59	58	65	70	69	64	66	65
3	**Մակրոտնտեսական կայունություն**	**72**	**77**	**64**	**83**	**114**	**99**	**53**	**83**
3.01	Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2014 թ.	51	64	50	66	92	113	66	103
3.02	Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2014 թ.	113	103	84	77	76	49	36	38
3.03	Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2014 թ.	56	104	1	105	119	78	75	61
3.04	Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2014թ.	71	69	66	57	68	70	19	26
3.05	Երկրի սուվերեն վարկանիշ, 2015թ. մարտի դրությամբ	88	85	95	89	86	86	--	--
4	**Առողջապահություն և առաջնային կրթություն**	**95**	**99**	**85**	**80**	**94**	**93**	**97**	**97**
4.01	Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2012 թ.	n/a	n/a	1	1	1	1	1	67
4.02	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա (2013 -2014թթ. կշռված միջինը)	n/a	n/a	1	1	1	1	1	67
4.03	Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2013թ.	68	74	76	82	82	80	79	75
4.04	Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա (2013 -2014թթ. կշռված միջինը)	70	71	76	78	86	84	48	69
4.05	ՁԻԱՀ-ի տարածվածությունը, % չափահաս (15-49 տարեկան) բնակչությունից, 2013թ.	1	1	---	---	---	---	---	---
4.06	ՁԻԱՀ-ի գործարար ծախքը (2013 -2014թթ. կշռված միջինը)	38	37	50	46	64	55	34	49
4.07	Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2013թ.	74	74	78	77	83	82	75	84
4.08	Կյանքի սպասվող տևողություն, 2013թ.	64	67	71	64	64	65	88	87
4.09	Առաջնային կրթության (դպրոցների) որակը (2014 -2015թթ.կշռված միջինը)	76	83	77	70	88	88	81	82
4.10	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2013թ.	122	120	115	108	119	115	108	109
5	**Բարձրագույն կրթություն և վերապատրաստում**	**72**	**75**	**77**	**70**	**76**	**91**	**96**	**94**
5.01	Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2013թ.	49	51	61	57	52	69	62	57
5.02	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը, 2013թ.	59	59	51	50	49	68	65	65

5.03	Կրթության համակարգի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	84	86	69	79	97	115	105	98
5.04	Մաթեմատիկական և գիտական կրթության որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	47	69	67	71	81	74	73	76
5.05	Կառավարման դպրոցների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	115	116	120	127	131	130	125	124
5.06	Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում (2014 -2015թթ. կշռված միջինը)	70	68	78	78	92	107	101	103
5.07	Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	104	120	119	106	114	124	120	125
5.08	Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	117	119	114	98	105	116	114	117
6	**Ապրանքային շուկայի արդյունավետությունը**	**50**	**64**	**58**	**72**	**108**	**113**	**116**	**110**
6.01	Տեղական մրցակցության ինտենսիվությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	85	85	102	130	139	136	128	132
6.02	Շուկայի գերիշխանությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	79	93	75	90	133	133	129	133
6.03	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	88	105	97	116	138	138	132	132
6.04	Հարկավորման ազդեցությունը ներդրումները կատարելու խթանների վրա (2014 -2015թթ. կշռված միջինը)	76	105	96	---	---	---	---	---
6.05	Հարկման ընդհանուր դրույքաչափը, 2013թ.	13	73	76	79	74	56	52	42
6.06	Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը, 2014թ.	3	3	10	8	34	34	75	58
6.07	Գործարարություն սկսելու համար պահանջվող օրերի քանակը, 2014թ.	8	9	34	34	63	56	53	38
6.08	Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը (2014 -2015թթ. կշռված միջինը)	81	79	45	44	47	41	26	30
6.09	Առևտրային ոչ-տարիֆային խոչընդոտների գերակայությունը (2014 -2015թթ.կշռված միջինը)	54	80	94	99	96	100	97	104
6.10	Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը, 2014թ.	45	41	40	38	34	35	119	41
6.11	Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	101	95	89	97	106	111	95	84
6.12	Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը գործարարություն վրա (2014 -2015թթ. կշռված միջինը)	109	110	94	85	95	102	89	87
6.13	Մաքսային գործընթացների բեռը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105	108	123	127	132	138	131	122
6.14	Ներմուծումը ՀՆԱ-ում, %, 2014 թ.	44	56	59	59	58	-	-	-
6.15	Սպառողների կողմնորոշման աստիճանը (2014 -2015թթ. կշռված միջինը)	60	66	63	98	113	134	124	108
6.16	Գնորդների զարգացածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	72	77	69	64	74	75	83	88
7	**Աշխատուժի շուկայի արդյունավետությունը**	**58**	**74**	**50**	**30**	**34**	**47**	**47**	**45**
7.01	Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում (2014 -2015թթ. կշռված միջինը)	44	42	35	34	44	53	45	58
7.02	Աշխատավարձի սահմանման ճկունությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	40	65	38	21	43	63	46	34
7.03	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները (2014 -2015թթ. կշռված միջինը)	15	18	12	10	18	33	22	16
7.04	Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով), 2014թ.	41	47	47	46	21	21	19	19
7.05	Հարկավորման ազդեցությունը աշխատելու խթանների վրա (2014 -2015թթ.	101	94	78	---	---	---	---	---

	կշռված միջինը)								
7.06	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը (2014 -2015թթ. կշռված միջինը)	61	48	36	31	41	63	52	47
7.07	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	93	95	96	91	107	117	115	125
7.08	Տաղանդավոր անձանց պահելու երկրի ունակությունը (ուղեղների արտահոսքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	119	123	121	88	103	97	107	106
7.09	Տաղանդավոր անձանց ներգրավելու երկրի ունակությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	111	119	116	---	---	---	---	---
7.10	Աշխատուժի մեջ կանանց (15-64 տարեկան) մասնակցությունը, 2013թ.	82	96	91	88	51	41	36	41
8	**Ֆինանսական շուկայի զարգացածությունը**	**94**	**97**	**76**	**78**	**95**	**110**	**97**	**107**
8.01	Ֆինանսական ծառայությունների առկայությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	73	75	63	76	102	121		
8.02	Ֆինանսական ծառայությունների մատչելիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	79	81	50	48	71	104	103	107
8.03	Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը (2014 -2015թթ. կշռված միջինը)	120	112	115	115	120	131	112	112
8.04	Վարկերի մատչելիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	97	97	88	69	85	124	119	120
8.05	Վենչուրային կապիտալի առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	90	96	93	89	109	131	129	130
8.06	Բանկերի ամրություն (2014 -2015թթ. կշռված միջինը)	83	66	53	51	69	81	81	88
8.07	Արժեթղթերի շրջանառության կարգավորումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	112	112	110	106	110	121	118	119
8.08	Օրենսդրական իրավունքների ինդեքսը, 2014թ.	63	63	65	65	60	60	36	52
9	**Տեխնոլոգիական պատրաստվածությունը**	**75**	**71**	**72**	**92**	**88**	**108**	**105**	**112**
9.01	Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	87	95	97	101	116	127	115	116
9.02	Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը (2013 -2014թթ. կշռված միջինը)	113	113	98	96	114	121	105	109
9.03	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում (2014 -2015թթ. կշռված միջինը)	79	79	50	57	77	79	85	92
9.04	Ինտերնետից օգտվողների քանակը, %, 2014թ.	75	71	84	106	68	111	109	102
9.05	Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014 թ.	71	70	74	75	86	108	86	102
9.06	Միջազգային ինտերնետի արագությունը (կբ/վայրկյան), 2014թ.	58	48	47	96	72	73	--	--
9.07	Լայնաշերտ բջջայինի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014թ.	78	67	57	66	--	--	--	--
10	**Շուկայի չափը**	**116**	**118**	**117**	**115**	**115**	**116**	**109**	**111**
10.01	Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում), 2014թ.	112	111	110	108	110	111	104	106
10.02	Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը), 2014թ.	120	126	127	123	127	129	125	125
10.03	ՀՆԱ (գնողունակության համարժեքությամբ մլրդ.դոլար), 2014թ.	115	118	119	116	117	--	--	--
10.04	Արտահանման տես.կշիռը ՀՆԱ-ում, %, 2014թ.	96	127	130	127	129	--	--	--
11	**Գործարարության զարգացածությունը**	**97**	**93**	**87**	**92**	**107**	**109**	**112**	**120**
11.01	Տեղական արտադրողների քանակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	89	79	74	102	111	110	112	114

11.02	Տեղական արտադրողների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	91	86	85	96	113	116	112	111
11.03	Կլաստերների զարգացման վիճակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105	113	84	72	108	124	122	130
11.04	Մրցակցային առավելության բնույթը (2014 -2015թթ. կշռված միջինը)	49	57	55	50	54	39	41	60
11.05	Արտահանող ընկերությունների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը (2014 -2015թթ. կշռված միջինը)	89	94	88	91	121	121	103	94
11.06	Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	104	95	85	98	102	110	113	122
11.07	Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	85	91	92	84	87	100	99	103
11.08	Մարքեթինգի մակարդակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	121	109	100	105	116	119	118	123
11.09	Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	106	106	115	108	113	128	126	123
12	**Նորամուծություններ**	**107**	**104**	**103**	**105**	**112**	**116**	**108**	**106**
12.01	Նորամուծությունների ունակությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	87	98	77	62	61	65	66	68
12.02	Գիտահետազոտական ինստիտուտների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105	105	106	111	107	103	98	101
12.03	Հետազոտությունների և զարգացման (R&D) նպատակով ընկերությունների ծախսերը (2014 -2015թթ. կշռված միջինը)	109	102	109	111	117	127	115	96
12.04	Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն (2013 -2014թթ. կշռված միջինը)	111	112	107	122	125	124	114	116
12.05	Առաջավոր տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	109	121	111	108	124	134	124	122
12.06	Գիտնականների և ինժեներների առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	59	75	74	73	87	93	91	80
12.07	Պատենտների քանակը (1 մլն մարդու հաշվով) (2011-2012թթ. միջինը)	49	53	58	61	64	90	69	63

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2015-2016թթ. գնահատականների (աշխարհի 140 երկրների շարքում)

Աղյուսակ 3

Առավելությունները	Տեղը	Թույլ կողմերը	Տեղը
Հաստատություններ - 76			
Ահաբեկչության գործարար ծախքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	40	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում (2014 -2015թթ. կշռված միջինը)	115
Ներդրողների պաշտպանվածության ինդեքսի ամրությունը, 2014թ. ինդեքս	48	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	108
		Դատական համակարգի անկախությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	106
		Ընկերությունների բարոյական վարքագիծը (2014 -2015թթ. կշռված միջինը)	96
		Կորպորատիվ խորհուրդների ուժը (2014 -2015թթ. կշռված միջինը)	94
		Մտավոր սեփականության պաշտպանվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	93
		Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում (2014 -2015թթ. կշռված միջինը)	89
		Մասնավոր սեփականության իրավունքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	90
		Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	79
		Ոստիկանական ծառայության հուսալիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	79
		Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը ((2014 -2015թթ. կշռված միջինը)	78
		Կառավարության ծախսումների շռայլումը (2013 -2014թթ. կշռված միջինը)	78
		Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը (2014 -2015թթ. կշռված միջինը)	77
		Անօրինական վճարներ և կաշառակերություն (2014 -2015թթ. կշռված միջինը)	73
		Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	71
		Կազմակերպված հանցագործությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	57
		Կառավարության կարգավորման բեռը (2014 -2015թթ. կշռված միջինը)	56
		Կառավարության քաղաքականության թափանցիկությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	51

Ենթակառույցներ - 82			
		Նավահանգստային ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	132
		Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2015 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների մեկ շաբաթվա միջինը)	102
		Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	86
		Ճանապարհների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	75
		Երկաթուղային ենթակառույցի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	71
		Էլեկտրականության մատակարարման որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	69
		Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014թ.	64
		Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով), 2014 թ.	59
		Ընդհանուր ենթակառույցների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	58
Մակրոտնտեսական կայունություն - 72			
		Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2014 թ.	113
		Երկրի սուվերեն վարկանիշ, 2015թ. մարտի դրությամբ	88
		Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2014թ.	71
		Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2014 թ.	56
		Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2014 թ.	51
Առողջապահություն և առաջնային կրթություն - 95			
ՁԻԱՀ-ի տարածվածությունը, % չափահաս (15-49 տարեկան) բնակչությունից, 2013թ.	1	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2013թ.	122
ՁԻԱՀ-ի գործարար ծախքը (2013 -2014թթ. կշռված միջինը)	38	Առաջնային կրթության (դպրոցների) որակը (2014 -2015թթ.կշռված միջինը)	76
		Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2013թ.	74
		Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա (2013 -2014թթ. կշռված միջինը)	70
		Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2013թ.	68
		Կյանքի սպասվող տևողություն, 2013թ.	64
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում - 72			
		Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	117
		Կառավարման դպրոցների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	115

		Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	104
		Կրթության համակարգի որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	84
		Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում (2014 -2015թթ. կշռված միջինը)	70
		Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը, 2013թ.	59
		Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2013թ.	49
		Մաթեմատիկական և գիտական կրթության որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	47
Ապրանքային շուկայի արդյունավետությունը - 50			
Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը, 2014թ.	3	Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը գործարարություն վրա (2014 -2015թթ. կշռված միջինը)	109
Գործարարություն սկսելու համար պահանջվող օրերի քանակը, 2014թ.	8	Մաքսային գործընթացների բեռը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105
Հարկման ընդհանուր դրույքաչափը, 2013թ.	13	Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	101
Ներմուծումը ՀՆԱ-ում, %, 2014 թ.	44	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	88
Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը, 2014թ.	45	Տեղական մրցակցության ինտենսիվությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	85
		Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը (2014 -2015թթ. կշռված միջինը)	81
		Շուկայի գերիշխանությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	79
		Հարկավորման ազդեցությունը ներդրումները կատարելու խթանների վրա (2014 -2015թթ. կշռված միջինը)	76
		Գնորդների զարգացածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	72
		Սպառողների կողմնորոշման աստիճանը (2014 -2015թթ. կշռված միջինը)	60
		Առևտրային ոչ-տարիֆային խոչընդոտների գերակայությունը (2014 -2015թթ.կշռված միջինը)	54
Աշխատուժի շուկայի արդյունավետությունը - 58			
Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները (2014 -2015թթ. կշռված միջինը)	15	Տաղանդավոր անձանց պահելու երկրի ունակությունը (ուղեղների արտահոսքը (2014 -2015թթ. կշռված միջինը)	119
Աշխատավարձի սահմանման ճկունությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	40	Տաղանդավոր անձանց ներգրավելու երկրի ունակությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	111
Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով), 2014թ.	41	Հարկավորման ազդեցությունը աշխատելու խթանների վրա (2014 -2015թթ. կշռված միջինը)	101

Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում (2014 -2015թթ. կշռված միջինը)	44	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	93
		Աշխատուժի մեջ կանանց (15-64 տարեկան) մասնակցությունը, 2013թ.	82
		Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը (2014 -2015թթ. կշռված միջինը)	61
Ֆինանսական շուկայի զարգացածությունը – 94			
		Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը (2014 -2015թթ. կշռված միջինը)	120
		Արժեթղթերի շրջանառության կարգավորումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	112
		Վարկերի մատչելիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	97
		Վենչուրային կապիտալի առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	90
		Բանկերի ամրություն (2014 -2015թթ. կշռված միջինը)	83
		Ֆինանսական ծառայությունների մատչելիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	79
		Ֆինանսական ծառայությունների առկայությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	73
		Օրենսդրական իրավունքների ինդեքսը, 2014թ.	63
Տեխնոլոգիական պատրաստվածությունը - 75			
		Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը (2013 -2014թթ. կշռված միջինը)	113
		Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	87
		Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում (2014 -2015թթ. կշռված միջինը)	79
		Լայնաշերտ բջջայինի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014թ.	78
		Ինտերնետից օգտվողների քանակը, %, 2014թ.	75
		Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2014 թ.	71
		Միջազգային ինտերնետի արագությունը (կբ/վայրկյան), 2014թ.	58
Շուկայի չափը - 116			
		Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը), 2014թ.	120
		ՀՆԱ (գնողունակության համարժեքությամբ մլրդ.դոլար), 2014թ.	115
		Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում), 2014թ.	112
		Արտահանման տես.կշիռը ՀՆԱ-ում, %, 2014թ.	96

Գործարարության զարգացածությունը - 97			
		Մարքեթինգի մակարդակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	121
		Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը (2013 -2014թթ. կշռված միջինը)	106
		Կլաստերների զարգացման վիճակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105
		Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	104
		Տեղական արտադրողների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	91
		Տեղական արտադրողների քանակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	89
		Արտահանող ընկերությունների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը (2014 -2015թթ. կշռված միջինը)	89
		Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	85
		Մրցակցային առավելության բնույթը (2014 -2015թթ. կշռված միջինը)	49
Նորամուծություններ - 107			
		Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն (2013 -2014թթ. կշռված միջինը)	111
		Հետազոտությունների և զարգացման (R&D) նպատակով ընկերությունների ծախսերը (2014 -2015թթ. կշռված միջինը)	109
		Առաջավոր տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները (2014 -2015թթ. կշռված միջինը)	109
		Գիտահետազոտական ինստիտուտների որակը (2014 -2015թթ. կշռված միջինը)	105
		Նորամուծությունների ունակությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	87
		Գիտնականների և ինժեներների առկայությունը (2014 -2015թթ. կշռված միջինը)	59
		Պատենտների քանակը (1 մլն մարդու հաշվով) (2011-2012թթ. միջինը)	49

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների համաշխարհային մրցունակության գնահատականները 2015-2012թթ. ըստ Համաժողովի

Աղյուսակ 4

Ինդեքսի անվանումը		Հայաստան				Վրաստան				Ադրբեջան			
		2015-2016	2014-2015	2013-2014	2012-2013	2015-2016	2014-2015	2013-2014	2012-2013	2015-2016	2014-2015	2013-2014	2012-2013
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**82/140**	**85/144**	**79/148**	**82/144**	**66/140**	**69/144**	**72/148**	**77/144**	**40/140**	**38/144**	**39/148**	**46/144**
1.	Հաստատություններ	76	72	65	71	40	48	64	61	64	60	59	63
2.	Ենթակառույցներ	82	78	80	80	61	59	56	53	65	70	69	71
3.	Մակրոտնտեսական կայունություն	72	77	64	83	51	48	61	88	10	9	8	18
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	95	99	85	80	65	63	70	61	102	104	109	107
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	72	75	77	70	87	92	92	93	89	90	87	89
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	50	64	58	72	48	60	67	82	66	72	71	60
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	58	74	50	30	32	41	40	35	30	33	30	26
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	94	97	76	78	68	76	75	93	114	89	88	98
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	75	71	72	92	72	67	68	76	57	56	50	61
10.	Շուկայի չափը	116	118	117	115	99	103	103	99	67	72	72	76
11.	Գործարարության զարգացվածությունը	97	93	87	92	112	113	120	113	73	80	70	69
12.	Նորամուծություններ	107	104	103	105	123	121	126	126	61	59	51	46

Նախկին ԽՍՀՄ և ԿԱԵ երկրների համաշխարհային մրցունակության և դրա առանձին փուլերի ինդեքսները ըստ Համաժողովի

Աղյուսակ 5

Երկրներ	Ընդհանուր ինդեքս (աշխարհի 140 երկրների թվում)		I-ին փուլ--Առաջնային պահանջներ		II փուլ--Արդյունավետության խթանիչներ		III փուլ--Նորամուծություններ և կատարելագործման խթանիչներ	
	Դիրք	Գնահատական	Դիրք	Գնահատական	Դիրք	Գնահատական	Դիրք	Գնահատական
Էստոնիա	30	4.74	21	5.60	28	4.74	31	4.15
Չեխիա	31	4.69	31	5.27	26	4.78	32	4.14
Լիտվա	36	4.55	35	5.14	36	4.59	37	4.02
Ադրբեջան	40	4.50	43	4.92	69	4.05	66	3.59
Լեհաստան	41	4.49	44	4.91	34	4.64	57	3.70
Ղազախստան	42	4.49	46	4.87	45	4.36	78	3.53
Լատվիա	44	4.45	37	5.10	39	4.56	58	3.69
Ռուսաստան	45	4.44	47	4.87	40	4.53	76	3.54
Թուրքիա	51	4.37	57	4.68	48	4.33	56	3.71
Ռումինիա	53	4.32	70	4.55	44	4.37	84	3.48
Բուլղարիա	54	4.32	68	4.57	50	4.31	94	3.37
Սլովենիա	59	4.28	45	4.90	56	4.21	39	3.99
Մակեդոնիա	60	4.28	60	4.65	64	4.11	62	3.62
Հունգարիա	63	4.25	59	4.67	49	4.31	69	3.57
Վրաստան	66	4.22	51	4.83	77	3.96	118	3.10
Սլովակիա	67	4.22	56	4.73	47	4.34	59	3.68
Մոնտենեգրո	70	4.20	58	4.67	75	3.97	86	3.45
Իրան	74	4.09	63	4.64	90	3.77	102	3.33
Խորվաթիա	77	4.07	69	4.56	68	4.05	90	3.43
Ուկրաինա	79	4.03	101	4.08	65	4.09	72	3.55
Տաջիկստան	80	4.03	84	4.32	104	3.60	71	3.56
Հայաստան	*82*	*4.01*	*81*	*4.39*	*84*	*3.84*	*101*	*3.33*
Մոլդովա	84	4.00	89	4.28	94	3.76	128	2.93
Ալբանիա	93	3.93	87	4.29	89	3.78	115	3.21
Սերբիա	94	3.89	96	4.15	83	3.85	125	3.02
Ղրղզստան	102	3.83	106	4.01	99	3.65	122	3.04
Բոսնիա-Հերց.	111	3.71	95	4.15	112	3.48	120	3.05

Հայաստանի դիրքը նախկին ԽՍՀՄ և ԿԱԵ երկրների թվում «Ֆինանսական շուկայի զարգացվածություն» հիմնասյան գծով (2015-2016թթ. ինդեքս)

Աղյուսակ 6

8-րդ հենասյուն. Ֆինանսական շուկայի զարգացվածություն	
Էստոնիա	23
Չեխիա	24
Սլովակիա	35
Լատվիա	37
Լեհաստան	43
Մոնտենեգրո	44
Մակեդոնիա	52
Ռումինիա	55
Լիտվա	57
Բուլղարիա	59
Թուրքիա	64
Հունգարիա	65
Վրաստան	68
Խորվաթիա	88
Ղազախստան	91
Հայաստան	***94***
Ռուսաստան	95
Ղրղզստան	102
Տաջիկստան	110
Բոսնիա-Հերց.	113
Ադրբեջան	114
Մոլդովա	115
Ալբանիա	118
Սերբիա	120
Ուկրաինա	121
Սլովենիա	128
Իրան	134

8.01 Ֆինանսական ծառայությունների առկայությունը	
Թուրքիա	34
Էստոնիա	35
Չեխիա	37
Սլովակիա	38
Լատվիա	39
Լեհաստան	43
Լիտվա	44
Հունգարիա	60
Ղազախստան	63
Ռուսաստան	69
Հայաստան	***73***
Մակեդոնիա	74
Խորվաթիա	76
Բուլղարիա	83
Վրաստան	88
Ադրբեջան	91
Ռումինիա	92
Մոնտենեգրո	93
Տաջիկստան	96
Սերբիա	97
Ուկրաինա	101
Բոսնիա-Հերց.	106
Ղրղզստան	108
Մոլդովա	109
Ալբանիա	116
Սլովենիա	125
Իրան	135

8.02 Ֆինանսական ծառայությունների մատչելիությունը	
Սլովակիա	25
Չեխիա	30
Լատվիա	31
Թուրքիա	36
Էստոնիա	37
Լիտվա	38
Լեհաստան	43
Մակեդոնիա	52
Ղազախստան	53
Ռումինիա	64
Ռուսաստան	67
Վրաստան	73
Ադրբեջան	75
Մոնտենեգրո	76
Հայաստան	***79***
Տաջիկստան	82
Բուլղարիա	84
Հունգարիա	97
Խորվաթիա	100
Մոլդովա	102
Ալբանիա	103
Բոսնիա-Հերց.	106
Ղրղզստան	107
Սերբիա	111
Սլովենիա	120
Ուկրաինա	123
Իրան	130

8.03 Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը	
Էստոնիա	50
Թուրքիա	60
Չեխիա	62
Լեհաստան	68
Լիտվա	71
Մոնտենեգրո	79
Մակեդոնիա	84
Սլովակիա	86
Ռուսաստան	88
Ղազախստան	91
Բուլղարիա	92
Ադրբեջան	96
Լատվիա	99
Ռումինիա	100
Տաջիկստան	101
Հունգարիա	102
Իրան	104
Խորվաթիա	105
Ղրղզստան	108
Սլովենիա	117
Ուկրաինա	118
Հայաստան	***120***
Մոլդովա	121
Բոսնիա-Հերց.	122
Սերբիա	126
Վրաստան	133
Ալբանիա	140

8.04 Վարկերի մատչելիությունը		8.05 Վենչուրային կապիտալի առկայությունը		8.06 Բանկերի ամրությունը		8.07 Արժեթղթերի շրջանառության կարգավորումները		8.08 Օրենսդրական իրավունքների ինդեքսը	
Տաջիկստան	22	Էստոնիա	26	Չեխիա	13	Էստոնիա	29	Մոնտենեգրո	1
Չեխիա	37	Չեխիա	31	Սլովակիա	14	Չեխիա	37	Ռումինիա	8
Սլովակիա	40	Տաջիկստան	35	Էստոնիա	26	Լեհաստան	48	Հունգարիա	8
Էստոնիա	41	Լիտվա	48	Մակեդոնիա	45	Մակեդոնիա	60	Լատվիա	11
Ղազախստան	44	Մակեդոնիա	49	Լեհաստան	48	Լատվիա	62	Բուլղարիա	11
Մոնտենեգրո	50	Լատվիա	52	Թուրքիա	51	Թուրքիա	65	Վրաստան	11
Բուլղարիա	54	Սլովակիա	57	Լատվիա	52	Սլովակիա	73	Ղրղզստան	17
Մակեդոնիա	56	Ղազախստան	59	Վրաստան	57	Լիտվա	76	Մոլդովա	17
Ռուսաստան	57	Բուլղարիա	62	Խորվաթիա	67	Մոնտենեգրո	84	Ուկրաինա	17
Ռումինիա	60	Մոնտենեգրո	64	Ալբանիա	80	Ղազախստան	87	Էստոնիա	24
Թուրքիա	65	Ռուսաստան	66	Ռումինիա	82	Խորվաթիա	92	Չեխիա	24
Ադրբեջան	79	Ադրբեջան	71	***Հայաստան***	***83***	Ռուսաստան	97	Սլովակիա	24
Ուկրաինա	87	Ղրղզստան	84	Լիտվա	84	Ադրբեջան	98	Լեհաստան	24
Լեհաստան	89	Հայաստան	90	Տաջիկստան	89	Ռումինիա	99	Բոսնիա-Հերց.	24
Լիտվա	91	Թուրքիա	93	Բուլղարիա	92	Հունգարիա	101	Ալբանիա	24
Լատվիա	96	Լեհաստան	96	Հունգարիա	94	Բուլղարիա	103	Մակեդոնիա	44
Հայաստան	***97***	***Հունգարիա***	***101***	Ադրբեջան	103	Վրաստան	110	Լիտվա	44
Մոլդովա	103	Ուկրաինա	102	Մոնտենեգրո	108	***Հայաստան***	***112***	Խորվաթիա	63
Խորվաթիա	105	Ռումինիա	103	Ղազախստան	110	Տաջիկստան	113	***Հայաստան***	***63***
Վրաստան	109	Սլովենիա	104	Սերբիա	112	Սլովենիա	114	Սերբիա	63
Ղրղզստան	113	Բոսնիա-Հերց.	106	Ռուսաստան	115	Սերբիա	121	Ռուսաստան	80
Սերբիա	120	Խորվաթիա	109	Բոսնիա-Հերց.	122	Իրան	122	Թուրքիա	93
Հունգարիա	124	Վրաստան	119	Ղրղզստան	125	Բոսնիա-Հերց.	124	Ղազախստան	93
Բոսնիա-Հերց.	125	Մոլդովա	123	Մոլդովա	132	Ղրղզստան	126	Սլովենիա	93
Ալբանիա	127	Իրան	125	Սլովենիա	137	Մոլդովա	129	Ադրբեջան	106
Սլովենիա	137	Սերբիա	130	Ուկրաինա	140	Ալբանիա	133	Իրան	106
Իրան	138	Ալբանիա	133	Իրան	121	Ուկրաինա	135	Տաջիկստան	129